

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարադաշնակից գիտնական
Tudmuc. Pedakuxa „Muxak“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և քանդակներից):

Յայտարարութիւն ընդունվում է ա մէկ լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Դժբախտ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
Դատախառնութիւն

«ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ»
Մարտի 11-ին, կիրակի օրը, երեկոյան
ժամը 8-ին

Արհեստագործների ընկերութեան դահլիճում
ՊՐՕԳՐԱՄԱ

«Արշակունի» բաժանումն Մեծ-Հայաստանի:—
Էրզրում, որպէս կենտրոն տրանզիտի ճանապարհ:
— Գլխավոր կէտերը Մեծ և Փոքր Հայաստանի:
— Հանքերը և միներալական աղբիւրները:— Բը-
նական հարստութիւնները կլիմայով:— Հան-
քային հարստութիւնները և Սօղանլուի անտա-
ռը Ռուսաստանին նոր միացած Ղարսի նահան-
գի մէջ:— Անտառները և վառելիք Հայաստանում:
— Արշակունի դաշտավայրը:— Անտառներում գը-
տնվող կենդանիները:— Արտադրութիւնը:— Տնային
կենդանիները:— Խոշնարածութիւն և անասնա-
պահութիւնը:— Երկրագործութիւնը:— Բուսական
հարստութիւնները:— Գիւնեգործութիւն, կաթնա-
լիւն անտառները, շերամապահութիւն, այգե-
պահութիւն և պարտիզպահութիւնը:— Աղգարանա-
կութիւնը:— Թիւրքերը, հայերը և քրդերը:—
Երեք ցեղերի մօտ կնոջ դրութիւնը:— Արհեստ-
ները:— Հայուհին որպէս աշխատող կին:— Հա-
յերը որոնք անխառն են բնակվում մասնաւոր-
կաններով:— Խոտորովի համայնքը:— Ձէլթուն:
— Մագուր, լեզու, ուսումնարաններ և կուլ-
տուրական սկզբունքները:— Հայոց հնութիւն-
ները:— Երկու գծեր հայոց պատմութեանց. ճոր-
տութեան բացակայութիւն և կրօնական համըն-
դողութիւն:— Ինչի հայերը Թիւրքիայում պակա-

սում են թափ:— Հայ մանկեղանները:— Քիւր-
գերի և Թիւրքերի յարաբերութիւնը դէպի հայերը:
— Հարկեր և հողային յարաբերութիւնները:— Բէ-
գեր:— Թիւրքաց օրէնքներ և Թիւրքաց կամայա-
կանութիւն:— Բերքի կոնգրէս:— Եւրոպայի
անժանութիւնները հայերի քաղաքակրթական
յատկութիւնների հետ:— Եւրոպական քաղաք-
կան սկզբունքը, զէնքեր և ապստամբութիւն,
որպէս պայման ազգերի վերածնութեան:— Հայոց
ընտրութեան յատկանիւթ մի գիծ. խաղաղ, կուլ-
տուրական մաքառումն փոխանակ զինված կուլ:»
Տոմարները կարելի է ստանալ «Մշակի» խմբ-
ագրատանը, «Կենտրոնական» գրադաճառարանի
մէջ և Արհեստագործների ընկերութեան մէջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:— Ներքին
տեսուչութիւն:— Նամակ Նոյնուց:— Նամակ Բա-
գուրից:— Արտաքին տեսուչութիւն:— «Մարտի-
սի» թղթակցութիւնը:— «Մշակի» հեռագրիչները:
— Յայտարարութիւններ:— Տեղեկացոյց:— Բա-
նասիրական:— Հայ կինը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑ-
ՔԵՐԸ

Հեռագիրը հաղորդեց, որ մեծ
պետութիւնների կառավարու-
թիւնները դիտաւորութիւն ունեն

դեսպանների մի կոնֆերենցիա
կազմել, որի գործը պետք է լինի
վճռել Բերլինի դաշնագրի մէջ
մտած անորոշ կամ մութ կէտերը:
Այդ լուրը բաւական անհան-
գիստ է արել անգլիական կառա-
վարութեանը: Անգլիական դիպ-
լոմատիան վախենում է, որ չը
լինի թէ դեսպանների ժողովը
ոչնչացնէ Բերլինի դաշնագրի այն
յօդուածը, որ իրաւունք է տա-
լիս Թիւրքիային Բալկանեան սա-
րերի վրա, բողոքական իշխանու-
թեան և Արեւելեան Բուլղարիայի
սահմանների վրա զօրքեր պահել:
Այդ հարցի առիթով անգլիա-
կան պաշտօնական լրագիրները
այն եղբակացութեան են հաս-
նում, որ Թիւրքաց զօրքերի Բալ-
կանեան սարերի վրա գտնվելը
անհրաժեշտ է ոչ թէ այն պատ-
ճառով, որ նորա այդ կետի վրա
սովորաբար կարող են լուր պաշտ-

պանվել և ընդդիմանալ օտար
զօրքերի յարձակմանը, այլ որ նո-
քա ցոյց տան Արեւելեան Բուլ-
ղարիային, որ այդ երկիրը դեռ ևս
կախված է Թիւրքաց կառավա-
րութենից: Թիւրքաց զօրքերի
բացակայութիւնը Բալկանեան սա-
րերից կարող է առիթ լինել, որ
Արեւելեան Բուլղարիայի մէջ ան-
կարգութիւններ պատահեն, որ
Եւրոպայի համար բոլորովին ցան-
կալի չէ:

Արեւելեան Բուլղարիայի հարցը
չսովորական անհանգիստ է անում
Եւրոպական պետութիւններին: Ա-
մենք համոզված են, որ այդ ին-
քնավարութիւն ունեցող նահան-
գում ուսումնառ զօրքերի հեռանա-
լուց յետոյ կարող են մեծ անկար-
գութիւններ պատահել, եթէ
Թիւրքիան օգուտ կը բաղէ Բեր-
լինի դաշնագրի յօդուածների մէ-
կից, որ նրան իրաւունք է տալիս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

«Կինը է այն առանցքը, որի շուրջը
պտտվում է քաղաքակրթութիւնը»

Բաւական հեռացայ նպատակից: Կրկին վերա-
դառնալով դէպի գիւղական ընտանիքը, իմ նը-
կարագրերը վերջացած կը լինի: Կարգալով այս
հետազոտութիւնը, ինքն ըստ ինքեան ծագում
է հարց, արդեօք ինչից առաջ եկաւ կնոջ մի
այսպիսի դիրքորակման վրեժը, որ նա ծայն
չունի ոչ ընտանիքի և ոչ հասարակութեան մէջ,
որ նա պահվում է անմատչելի ծածկոցի տակ,
որպէս մի նիւթ, որին արտաքին ապուֆերայի
ազդեցութիւնը կարող էր փախցնել, որ նա իր
անձի տէրը չէ, այլ գործ են ածում նրան, որ-
պէս մի սեփականութիւն, որ ուրիշին էր պատ-
կանում, և վերջապէս, որ նա իբրեւ մարդ գրկ-
ված է մարդկային ամեն իրաւունքներից: Այդ
հարցերի լուծումը շատ դժուար է, մանաւանդ այն
պատճառով, որ պատմութիւնը մեր հին ընտանե-
կան կենքից ամենակի տեղեկութիւն չէ տալիս:
Շատերը կարծում են, թէ կնոջ այս դրութիւնը
կազմվեցաւ մասնական ազդեցութեան ներքոյ,
ոմանք տղամարդի բռնաւորութիւնն են պատճառ-
բերում: Բայց իմ կարծիքով, հայ ընտանիքի
կազմակերպութիւնը չէր կարող մի ուրիշ տեսակ
վիճակ ստեղծել կնոջ համար, քան թէ այն, որ
այժմ կայ: Նրա կացութիւնը այն աստիճան
համապատասխանում է իր շրջանին, որ սովոր-
ված եւ մտածել, եթէ այլ կերպ լինէր, անպատ-
շաճ կը լինէր: Երեւակայեցէ՛ք ձեզ մի գիւղական
ընտանիք, որ բաղկացած է քսան—երեսուն
կամ աւելի անդամներից, մի քանի ամուսնացած

եղբայրներ միասին են ապրում: Նրանց որդի-
ները նոյնպէս կնիկներ ունեն. տունը լցված է
զանազան հասակի երեխաներով:— Ինչից դու մի
փոքրիկ պետութիւն է, ուր մարդիկ կապված
են իրար հետ ընդհանուր շահերով: Մի այսպիսի
ընտանիքի ամբողջութիւնը և ներդաշնակու-
թիւնը պահպանելու համար, արեւելեան հայաց-
քով, շատ բնական է, որ կնիկներին ձայն և
իրաւունք չը տրուէր: Երկպառակութիւնը եղ-
բայրների մէջ միշտ ծագում է կնիկների ան-
համաձայնութիւնից: Կնոջ չափազանց բծախն-
դիր և նախանձտ է: Տղամարդը մտածեց նրա
բերանը փակել, որ ընտանիքի կապերը չը քան-
գվեն: Կնոջ դրութեան միւս մասնաւորութիւնն ևս
բնականաբար առաջ եկան մի և նոյն ընտանե-
կան պայմաններից, որ պահանջում են նրանից
անպայման հնազանդութիւն: Ի հարկէ, կնոջ զը-
րութեան վրա փոքր չազդեց և արտաքին աշ-
խարհը. տիրող ազգերի բռնաբարութիւնները
ստիպեցին քօղի տակ պահել նրան: Մի արա-
բական խալիֆա ասում է. «Երկու բան պէտք է
ծածուկ պահել օտարի աչքից, մէկը փողը, միւսը
— կնիքը»:— Այդ խրատը արեւելքի պահանջն էր:
Կանոն, ինչ հարկ կար, որ անպատճառ մի
քանի եղբայրներ անբաժան ապրէին, երբ կարող
էր իւրաքանչիւրը մի առանձին ընտանիք կազ-
մել: Այն ատենից բաժանումը պահան-
ջում է հիմնել մի այսպիսի, եթէ կարելի է ա-
սել ընկերական ասօցիացիայի ա գիւղական
ընտանիքը անպատճառ պէտք է շատ աշխատող
ձեռքեր ունենայ իր բազմաթիւ գործերի հա-
մար: Աւելացրէ՛ք դրա վրա և այն հանգամանքը,
որ մեր գիւղացիին ապրել է միշտ բարբարոս և
աւազակ ցեղերի բռնութեան ներքոյ. արտաքին
ճնշումը ստիպում էր, որ մօտ ազգականները
սեղմվէին միմեանց հետ և կազմէին մի մեծ ամ-
բողջ, ոչ միայն աւելի աշխատող ձեռքեր ունե-
նալու համար, այլ մի մեծ ուժ կազմելու համար,
և կուրծքով աշխատութեան արդիւնքը յափշտա-
կութեանց ազատ պահելու համար: Դա նահա-
պետական դրութեան պահանջն է: Մեր նախա-
պապ Հայկի ընտանիքը բաղկացած էր 300 հո-
գուց:

Այժմ, որ ազատութիւն է տրոււմ, և կենքի

պայմանները փոխվում են, նրա հետ էլ ընտա-
նիքի կազմակերպութիւնը փոքր առ փոքր ու-
րիշ ձև է ստանում. գերդաստանի անդամնե-
րի թիւը պակասում է, եղբայրները պակսվե-
լուց յետոյ բաժանվում են: Եւ, այստեղից, կնոջ
վիճակը մասամբ կը փոխվի: Ինչպէս նրա հա-
մար որ, եթէ նրանից պահանջում էին հնա-
զանդութիւն, պահանջում էին լուր. լինել, զա-
ղլիւսորոպէս այն նպատակով էր, որ պահ-
պանվի ընտանիքի ներդաշնակութիւնը, որ բազ-
կացած էր շատ անդամներից: Բայց եթէ այդ
և կին ու իրանց դաւանները մի փոքրիկ ընտա-
նիք են կազմում, այն ժամանակ տղամարդը
նրա հետ շատ խիստ չի լինի, և ինքը իր շա-
հերով միայն կնոջ հետ կապված լինելով, նրա
վրա կը նայի որպէս իր ընկերի վրա, և նրան
իրաւունքներ ու ազատութիւն կը տա: Եւ կի-
նը այսպէսով ընտանիքի մէջ փոխելով իր դը-
րութիւնը, նրա հասարակական դրութիւնն էլ
կը փոխվի: Այս դատողութիւնները գուցէ խորթ
երեան, բայց պէտք է խորամուկ լինել գիւ-
ղական գերդաստանի մէջ, այն ժամանակ կը
համոզվի մարդ, թէ այդ այդպէս է: Որքան էլ
սիրելու լինէր տղամարդը իր կնոջը, որքան էլ
ցանկանալու լինէր նրան լաւ և հանգիստ պա-
հել, դարձեալ չէր կարող, որովհետեւ աշխատան-
քի բաժանումը ընտանիքի մէջ պահանջում էր
որ բոլորը հաւասար գործէին: Եթէ ամուսնը
մի փոքր խնայէր իր կնոջը, իսկոյն կը գրգռէր
իր եղբոր կնոջ նախանձը, և զրանով եղբայր-
ների մէջ համաձայնութիւնը կը խաղաղվէր:
Բայց այդ պատճառ չէր կարող, եթէ բոլոր ա-
մուսնացած եղբայրները միասին չէին բնակ-
վում:

Ընտանիքի նոյն իսկ կազմակերպութիւնը
պահանջում էր մտքնել գերդաստանի մէջ միա-
պետական սիստեմա, յանձնելով իշխանութիւնը
այն անձի ձեռքը, որ բոլորից երէցն էր հասա-
կով և բարոյապէս հեղինակութիւն ունէր: Ի
հարկէ, կնոյն, որպէս ֆիզիկապէս մի թույլ ա-
րարած, պէտք է երկրորդական տեղ ընէր այդ
ընկերութեան մէջ, ուր պահանջվում է ա-
ւելի մարմնական ոյժ: Իսկ կինը իր դրութեան
այդ ձևի մէջ, թէև դարձելով անցկացրուց շատ

դժնակ օրեր, բայց կարողացաւ պահպանել իր
բարբի անգործութիւնը, և առանց փչանալ ու,
հասցրուց իրան մեր ժամանակին: Այժմ ունենք
ձեռքում մի անարատ և դեռ չը ձեւակերպված
տարր, որ սովորել է գործել, որ սովորել է ըն-
դունել ինչ որ լաւ է, ինչ որ օգտաւէտ է:—
տուր նրան ուսում, և նա կը լինի քաղաքակր-
թող տարր, որպէս միջին այսօր եղել է ընտա-
նիքի բարոյական հիմքը և նրա աշխատութիւն-
ները բաժանող անդամը: Մեծ բարեբարութիւն
արած կը լինի կնոջ սեռին այն մարդը, որ
լուսաւորութեան կայծը կը մտցնէ ամենախու-
զիւղական խրճիթներում. այդ լոյսը միայն կա-
րող է նրան առաջնորդել, և զուր քերելով
անային փակ չըջանից, կանէ նրան հասարա-
կական ընկերութեան անդամ:

Ես սկսեցի գեղջկուհու ծնունդից, պէտք է
վերջացնեմ նրա մահով: Այժմ մնում է խօսել
նրա ծերութեան մասին: Գիւղացի կինը որքան
հնաւում է, այնքան անտիկային բնատրութիւն
է ստանում, և որքան յիմարանում է, այնքան
խելացի է համարվում: Տարիների բարդութեան
հետ աւելանում է և նրա հեղինակութիւնը: Այդ
հասակում որդիքը աւելի պատկառանքով են
նայում նրան, հարսները աշխատում են չը վըշ-
տացնել: Ծերունի ծնողների թէ՛ անէծքը և թէ՛
օրհնութիւնը մեծ նշանակութիւն ունեն ուսմի
մօտ: Պառաւից աշխատութիւն չեն պահանջում,
թողնում են, որ հանգստանայ: Այդ հասա-
կում նա գործում է աւելի եկեղեցում, քան թէ
տան մէջ: Նա նախապատրաստվում է գերեզմա-
նի համար: Պառաւի ջերմեւանդութիւնը հաս-
նում է մինչև խելագարութեան: Նա լինում է
չափազանց սնահաւատ: Մանկութեան օրերում
և միջին հասակում նա ժամանակ չունէր մտա-
ծելու հոգու և երկնքի համար: Կենքը աւելի
շատ էր պահանջում: Տարվայ մէջ մի քանի
անգամ եկեղեցի գնալով և հաղորդվելով, նա իր
պարաքը վճարում էր: Այժմ հանգամանքները
փոխվեցան: Այսուամենայնիւ, տան մէջ դար-
ձեալ նա հանգիստ չէ մնում: ոսկրացած ձեռ-
ները չեն սովորել անգործ մնալ: Նա է հսկում
խոհանոցի վրա, բաժանում է կերակուրները.
մառանի բալանները իր մօտ է պահում, և

զօրքեր ունենալ Ռախմանան սա-
րերում:

Աւստրիական պաշտօնական
ընթացքներում լուր է տարածվել,
որ իբր թէ այդ պետութեան
զօրքերը պէտք է գրաւէին Արե-
ւելեան Բուլղարի: Այդ լուրը լը-
րագիրները անհիմն են համարում
հետեւալ պատճառներով. Արեւե-
լեան Բուլղարի գրաւած էր ուու-
սաց զօրքերով, որոնց ծախսերը
Բ. Գրան համաձայնութեամբ
ծածկվում էին նահանգի եկա-
մուտներով: Բ. Գրանը չէ հա-
մաձայնի, որ նոյն եկամուտներով
ծածկվեն և աւստրիական զօրքերի
ծախսերը: Այդպիսով մնում է,
որ ծախսերը ինքը աւստրիական
կառավարութիւնը վճարէ, որ
նոյնպէս անկարելի է քանի որ
ունգարական ազգային ժողովը
չափազանց սահմանափակել է և
այն ծախսերը, որոնք հարկաւոր
են Բուսնիա և Հերցեգովինա գը-
րաւող զօրքերը պահելու համար:
Մի և նոյն ժամանակ Բերլինի
դաշնագիրը ստորագրող պետու-
թիւնների մեծ մասը չէ համա-
ձայնի, որ աւստրիական զօրքերը
գրաւեն Բուլղարի:

Արեւելեան Բուլղարի հարցը
այն գրութեան մէջ է, որ կարող

է դժուարութիւնների պատճառ-
դառնալ:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒՍՈՒՑ

25 փետրվարի

Նույն գաւառի թուրք գիւղերը իրանց ա-
ւազակներով են պարծենում: Այս դարձանալի
չէ, քանի որ Գաղտնաբեր լեզգիների նման ան-
հանգիստ և վայրենի հարեաններ ունեն, այն-
պիսի հարեաններ, որոնց բնակութիւնները կաղ-
մում են կովկասեան լեռների ամեն մի ծակու-
ծուկը, կերակուր—անտառներում ապրող դա-
ղաններն ու թուղանները, հազուադէպ—այդ դա-
ղանների մորթիքը, վերջապէս գուարձութիւնը,
բաւականութիւնը—սուրը, հրացանը, վառօդը և
գնտակը:

Լսեցե՛ք խնդրեմ իմ պատմութիւնս այստեղի
աւազակների մասին: Երեք տարի օրանից առաջ
մեծ գիւղից պահապաններով տանելիս են եղել
Նուխի երկու յանցաւորներ, որոնք առանձին
առանձին ձիով վրա նստած, չղթալված են եղել
միասին: Շղթայի մի ծայրը մէկի ձեռքից, իսկ
միւս ծայրը երկրորդի ձեռքից է կապած եղել:
Ճանապարհը, որով տանում էին յանցաւորներին
ծածկված է թփերով և մի կողմը բարձրանում է
սարը: Առաջակ—կառնաւորներից ճարպիկը,
տեղի դուռներից օգուտ քաղելով, ձեռքի չըղ-
թան մի կերպով հանում է և ձիուց վայր գցե-
լով իրան, անհետանում է թփերի ու սարերի
մէջ: Այդ օրից նա լինում է անթիւն հսկո-
ղութեան տակ, իբրեւ փախուտական—աւազակ,
իբրեւ դաշտը (ինչպէս թուրքերն ասում են):

1877 թվ. վերջերում, երբ լեզգիները համար-
ձակութիւն ունեցան ապստամբելու, լուսալով,
երեկ, վերականգնել Շամլի իշխանութիւնը,
այս փախուտականը լեզգիներից մի քանիսը հա-
ւաքելով, յարձակվում է Բուլղարի երկրահա-
կողի (приставъ-ի) տան վրա, այրում է նրա
երկուսի ընտանիքում ևս մի և նոյն է: Մեր
քաղաքներում հարկաւոր արհեստաւորների
ընտանիքներ չեն ածած միմեանց վրա մի և նոյն
տան մէջ, այլ բոլորը առանձին տներ ունեն:
Կեանքի պայմանները թոյլ չեն տալիս, որ մի
քանի ընտանիքներ մէկ բնակարանում ապ-
րէին *): Փաղաքացին իր տունը վարձով է տա-
լիս այն ժամանակ, երբ իր համար աւելորդ էր,
այսինքն, երբ մի քանի տներ ունէր: Կանանցը
ըստ միմի մասին տների առանձին բաժնում
է գտնվում: Ընտանիքի անդամների թիւը հա-
մեմատաբար փոքր է լինում, քան թէ գիւղե-
րում: Այստեղ եղբայրները հենց որ պսակվեցան,
խիտ սակաւ է պատահում, որ միասին ապ-
րէին:

Քաղաքացի արհեստաւորը աւելի ծշուտ է,
քան գիւղացի երկրագործը: Կանանք պէտքերը
չափ են, քան թէ նրանց լցուցանելու միջոց-
ները: Արհեստաւորի հին, ասիական ձևով պատ-
րաստած արդիւնաբերութիւնը, օրըստօրէ գոր-
ծածութիւնից ընկնելով պատճառ է տալիս նը-
րա դառն չքաւորութեանը: Ընտանիքի հայրը
վաղ առաւօտեան գնում է իր խանութը և վե-
րադառնում է մեծ զինքերով, նա տանում է
իր հետ որդիներին, որը կարող էր իրան օգնել
կիրն չէ մասնակցում ամուսնի արհեստին և ոչ
կարող է օգնել նրան: Այդ կարելի էր, եթէ ար-
հեստանոցը մի և նոյն տան մէջ լինէր, ուր նը-
րանք բնակվում էին, բայց նա գտնվում է բա-
զարում, և կնոջ համար բազար դուրս գալ ան-
պատշաճ էր. շատ անգամ նա չէր գիտէ, թէ ա-
մուսնը որտեղ է գործում, և երբեք չէ տեսել
նրա արհեստանոցը: Եւ այսպէս արհեստաւորը
առաւօտեան գնում է իր գործին, կիրն մնում է
տան մէջ մինակ: Նա ոչ սպասաւոր ունի և ոչ
աղախին, ինքը իր տան ծառայողն է. և եթէ
չունէր նա հասած աղջիկ, որ օգնէր իրան, տնա-
լին գործերը բոլորն ինքն է կատարում: Պա-
ռու սկսեալով միայն հրամայող է, և շատ ան-
գամ խանգարում է նրան իր անտեղի պահանջ-
ներով, քան թէ օգնում է:

Աղջիկը այստեղ ևս ծնում է մի և նոյն հանգա-
մանքներին մէջ, որպէս գիւղերում, և եթէ նկարա-
զէինք նրա որպէս աշխարհ գալը և ընդունե-

բացակայութեան ժամանակ բոլոր պաշտօնական
—գրաւոր գործերը, մտնում է գիւղում եղող
բանաւր և կոտորելով պահապաններին, ազա-
տութիւն է տալիս իր կրօնակից եղբայրներին:
Մի և նոյն ժամանակ նա բաժանում է նրանց և
միւս գիւղացիներին այն հրացանները, որոնք
հասարակութիւնը խլել, պահել էր, որ չը լինի
թէ թուրքերը միասին իրանց կրօնակից լեզգի-
ների հետ:

Այս բոլոր համարձակ գործեր կատարող Սէ-
յիդն է, որի համար յիշեցի հարեանցօրէն իմ
անցեալ նամակում: Այժմ կը ցանկանայի աւե-
լի մանրամասնաբար խօսել այդ աւազակապե-
տի վրա, որ կատարեալ տիպ կարող է հանդի-
սանալ լեռնաբնակ թուրք աւազակներին: Սէյիդը
կատարեալ տղամարդի հասակումն է 30—40
տարեկան, ինքը բարձրահասակ, սև սև, նիհար,
բայց ոսկորահաստ: Դէմքը զծաղրութեան մէջ
արտայայտվում է կատարեալ արիութիւն. աչ-
քերը խոր ընկած են և փայլուն, բնիքը սև և
երկայն: Աւազակութեան ձեւերը, որոնք նա գործ
է դնում ահա երեք տարի է, հետաքրքիր են:
Շատ անգամ սարերում, անտառներում ապրե-
լով, նա Նիփի հարուստ գիւղացիները դռներին
գաղտնի կերպով թղթեր է կաշնել տալիս, ու-
րոնցով պահանջում է ուղարկել իրան մի 500—
1000 ռուբլ, եթէ ոչ գիւղացիներին սպառնում է
մեծ վտանգ: Ահագին տեղերի այլեւը, տները
կրակ տալը—ահա այն միջոցները, որոնց ա-
ւազակը դիմում է, երբ իր կամքը կատարված
չէ տեսնում, երբ իր ցանկութեանը լրումն չէ
տրվում:

Ինչպէս նիփեցիների, նոյնպէս այլ գիւղացի-
ների գաղտնաբեր հասնում է վերջապէս տէ-
րութեանը: Եւ ահա այս երկու շարժէ է, որ
Բուլղարի երկն են մի գունդ դադալ Սէյիդին
և իր կրօնակիցներին բռնելու համար: Մինչև
այժմ չը կարողանալով ձեռք գցել նրան, գաւա-
ռապետի օգնականը վերջին օրերում սկսել է
խիտ կերպով վարվել թշուառացիների հետ և
սպառնալիքներ կարգաւ նրանց, որոնք տէրու-
թեան կարծիքով հաց են տալիս և պահպանում են
իրան համագիւղացի—աւազակապետին: Ամբողջ
գիւղացիները, եթէ պահպանելիս էլ լինեն Սէ-
յիդին, այժմ, նեղ տեղն ընկած, ցանկութիւն են
յայտնում բռնելու կամ սպանելու նրան: Տէ-
րութիւնը մինչև անգամ 300 ռուբլ է նշանակել

Լուծիւնը, պէտք է շատ բան նորից կրկնէինք:
Մայրը ինքն է կերակրում նորածին աղջկան,
ինքն է հող տանում նրա մաքրութեան վրա, որ
սկզբում շատ խնամք է պահանջում: Մի և նոյն
ժամանակ նա պէտք է օջախը վառէ, կերակուր
պատրաստէ, և ամուսնի համար դուրսանը ձա-
ռուարիէ: Փոքրիկ աղջիկը միշտ խանգարում է,
այս պատճառով նրան շատ անգամ հենց օրօ-
րոցի մէջ ծեծում են, որ ձայնը կտրի, աղաղակ
չը բարձրացնէ: Եւ երբեմն խմեցնում են կաթ-
նով եփած խաչախաչ, որ քնէ և չը խանգարէ
մօրը. թմրութիւնը և ապուլութիւնը արիօնի հետ
փոքր հասակից մտնում է նրա ուղեղի մէջ:

Աղջկայ վիճակը փոխվում է, երբ նա սղառ-
վում է օրօրոցից, երբ այլ ևս չէ կերակրվում
մօր ստինքով, և երբ կարողանում է սողալ, կամ
չորս թաթիկները վրա քաշը գալ, և կամ պա-
տերը բռնելով ման գալ: Այժմ նա ինքն իրան
կարող է կառավարել: Նա երբեմն դուրս է գա-
լիս բակը և ամբողջ օրը թաւալվում է հողերի
և ցեխերի մէջ: Մայրը մասամբ ուրախ է, որ
նրա երեսը չէ տեսնում, և երբեմն գտնում է
նրան դրսումը քնած սառը գետնի վրա, կամ
խրված ցեխի մէջ: Տան չէմքից ոտքը դուրս
դնել և փողոցը գնալ նա չէ կարող, որովհետև
դուռը միշտ կողպած է լինում, բայց բակը
նրա խողովի համար բաւական ընդարձակ աս-
պարէզ է, մասնաւոր երբ դարձաբան է լինում
պարտեզով, որը գաւառական քաղաքներում
ընտանիքների միակ միջնորդութիւնն է:

Դեռ հինգ տարեկան հասակին չը հասած,
մայրը ստիպեցնում է նրան կատարել այս և
այն տնային գործը, օգնել իրան: Ամեն մի տ-
նապետութիւն հանդիպում է ծանր ապտակ-
ների: Այդ հասակում նրան թոյլ են տալիս
գնալ մերձակօր հարեանի տունը, երբ պէտք
էր մի բան փոխ առնել: Իսկ երբ դառնում է
նա տան կամ տանեկը, տարեկան, այնու-
հետև տան դռները փակվում են նրա առջև:
Խիտ հաղիւ անգամ մօր հետ նա ազգականնե-
րի մօտ է գնում: Գիւղացի աղջիկը այդ դէպ-
քում աւելի բաղդաւոր է, նա ապրում է աւելի
արձակ աշխարհում, և շատ անգամ, թէ և ոչ ա-
ւանց հսկողութեան, գնում է այգին, պարտե-

նրան, ով կիմացի Սէյիդի տեղը:—Անցեալ
անգամ գրել էի սրա որդու բռնելու մասին.
այժմ կիրն ևս բռնվեցաւ: Հետախուզութիւննե-
րը շարունակվում են: Սէյիդը չուտով կամ բըռ-
նված կամ սպանված կը լինի:—Յոյս կայ, որ
Սէյիդին բռնելուց յետոյ, տէրութիւնը իր ուշը
կը դարձնի և Իսուսի վրա.

ՆԱՄԱԿ ԲԱՅՈՒՑ

3 մարտի

Այս ձմեռ հարսանիքներ, նշանադրութիւններ,
նշանաւորութիւններ և այլ բաղձատեսակ ու-
րախութեան հանդէսներ շատ եղան մեր քա-
ղաքումը, բայց նրանցից մի տարօրինակը միայն
յիշում եմ այստեղ: Փետրվարի սկիզբներում մի
հայ զոյգի նշանադրութիւն եղաւ, բայց ոչ բո-
լորովին հին և ոչ նոր սովորութեամբ, որովհե-
տև երիտասարդը և օրիորդը թէ և միմեանց տե-
սել էին և նշանի մատանին փոխադարձաբար
իրար մատին դրել, բայց չէին խօսակցել և մօ-
տիկ չէին ձանաչում միմեանց: Անցաւ երկու շա-
բաթ և քարեկենդանի օրերում որոշեցին պսակ-
վել: Փետսն, ասում են, պատճառ բերելով թէ
օրիորդի այս ինչ յատկութիւնը ապագայումը
կարող էր մեծամեծ ծախքերի առիթ դառնալ
լսեցել էր, որ եթէ 10 հազար ռուբլի չը տան
ինքը չի պսակվի: Աղջկայ կողմը պատասխա-
նել էր թէ այն ասած գումարը պատրաստ է
և իրանք անպատճառ վճարելու են փեսային
պսակ գնալուց առաջ: Միամիտ պատրաստվում
են. հարսանիքի օրը հասնում է. երկու կողմի
վաղօրօք հրաւիրած հարիւրաւոր հիւրերը բոլորն
էլ հաւաքվում են պսակի դէմքը. պէտք է գը-
նան եկեղեցի, ուր ճրագալոյց արած սպասում
էին հոգևորականները: Այս միջոցին աղջկայ
եղբայրները և ազգականները, իրանց նախապէս
տարած խորհրդին և վճռին համաձայն, առաջա-
ւոր անձերից բաղդաւոր մի պատգամաւորու-
թիւն են ուղարկում փեսայի տունը, որոնք
նշանի պարագաները մէջ տեղ դնելով ասում
են. «Որովհետև դու փող ես ուղեւ և մեր աղջ-
կայ մի յատկութեանը ակնարկել ես, վշտացել
ենք, աղջկայ և մեր պատիւը չօչալիվել է. ուս-

ղը, դաշտը, սարը, և շատ բան սովորում է բը-
նութիւնից: Բայց արհեստաւորի աղջկայ աշխար-
հասցեւորութիւնը իր չափազանց նեղ չըլանի
մէջ մնում է խիտ սահմանափակ և միակողմա-
նի: Փակված տան չորս պատերի խուլ առանձ-
նութեան մէջ, փակվում է և նրա մտաւոր զար-
գացումը: Թէ և մայրը կարողանաւ նրան մի-
բան սովորացնել, բայց բոլոր նրա դաստիա-
րակութիւնը բարոյական բնաւորութիւնն ունի,
կրթող, զարգացողիչ նրա մէջ ոչինչ չը կայ,
Աղջիկը միշտ լուռ է մի և նոյն խրատները, թէ
պէտք է խոսար լինի, հնազանդ լինի, ամօթ-
խած լինի, սակաւ խօսել, ամենին չը ծիծա-
ղէ, տղամարդերի երեսին չը նայէ, պառու կը-
նիկներին ձեռքը համարէ և այլն: Նրա միտքը,
սիրտը և հոգին ձնչում են հին նախապաշար-
մունքների ներքոյ, և խլում են նրանից ամեն
մի ազատ, ինքնուրոյն զարգացում: Նա դառ-
նում է մտաւորապէս ինքուստ, բայց բարոյապէս
—հրեշտակ:

Աղջկանց դպրոցներ գաւառական քաղաքնե-
րում կամ չը կան, կամ եղանակներ չեն մատչե-
լի չեն մօղովից աղքատ դասին: Թողեալ այդ,
ստոր դասը դեռ նայում է դպրոցին, որպէս
մի անբարոյականացնող հիմնարկութեան: Այդ
կարծիքը ստեղծել է ևս միևի մտքում նոյն ինքն
դպրոցը: Եւ եթէ յաջողվում է արհեստաւորի
աղջկան դպրոց մտնել, ընտանիքի բռնակալու-
թիւնը շարունակվում է դպրոցը: Վարժապետը և
վարժուհին վարվում են նրա հետ նոյնպէս կոշտ
—կոպիտ կերպով, և երբեմն ապտակներով, որ-
պէս տանը վարվում էր մայրը, կամ հայրը:
Ծնողներից նա չը տեսաւ որ և ից զարգացնող
և կատարելագործող օրինակ, իսկ իր ու չափա-
ռուումը չէ տալիս սնունդ ոչ նրա մտքին և ոչ
հոգուն: Աղջիկը տարիներով երթնելում է դըպ-
րոցը կատարեալ տղիտութեան մէջ, և վնասա-
կարն այն է, որ թերի և անկարգ ուսումը, ար-
գելը դնելով ընական դարգացմանը, չիւնում է
նրանից բխալիտ:

(կը շարունակվի)

աւ յետ վեր կալ նշանդ, այլ ևս քեզ աղջիկ չենք տալ: Ընթերցողը ինքը կարող է երեւել, թէ այս խօսքերը ձրպիսի տպաւորութիւն կանխին լսողներին, մանաւանդ փեսայի և նրա ընտանեաց վրա. ամենքը սառած են մը: Նուա՛յն այսպէս ամեն ինչ խափանվում է, երկու կողմի հիւրերն ևս արտում և դարմացած վեր են կենում և սուսուու փուս ցրվում: Այս դէպքեր վրա բոլոր քաղաքը խօսում էր երկար ժամանակ և հազարումի դատողութիւններ աւնում. հասարակաց կարծիքը փեսային էր արդարացնում, իսկ պատգամաւոր պարոնները պարծենում էին իրանց քաջութեամբ, որ կարողացել էին այնպիսի խաղ հնարել և մարդ յայտառակել:— Հարստութեան սովորութիւնն է որ անյայտութիւնն չէ սիրում, միշտ աշխատում է աչքի ընկնել հռչակվել. բայց նա զանազան մարդկանց ձեռքում զանազան կերպարանքներով է յայտնվում: Մեր քաղաքի հարստութիւնը նոր է և դեռ շատ երիտասարդ. նա երկար ժամանակեայ աշխատանքի կամ բարոյական հաստատութեան արդիւնք չէ. ուստի թող ոչ ոք չը դարմանայ, եթէ նա տարօրինակ ձևերով է լոյս աշխարհին յայտնվում:

Մի քանի շաբաթ է, որ Բագուի քաղաքագլուխ պ. Չակելի, պետութեան տնօրէնութեամբ, ժամանակաւորապէս հեռացած է իր պաշտօնից. նորա տեղը նշանակված է պ. Կեսպետ—Ջենովի, որը բաւական եռանդով սկսել է իր գործունէութիւնը յօգուտ քաղաքին:— Ինքնավարութիւնը վերջապէս սկսեց գործնական միջոցներով զինել քաղաքի մարդկութեան վերաբերութեամբ. ամեն տեղ բազմամեայ կեդրոնութիւնները սրբում են, կոյտ կոյտ մի տեղ հաւաքում և վերան նախ անում ու կրակ տալիս: Քաղաքը բաժանել են 24 մաս և յանձնել մի մաքրապահ յանձնաժողովի հոգացողութեան, որի իւրաքանչիւր անդամը հանդերձ իր օգնականով պարտաւոր է հսկել իր մասի վրա: Արտաքին ցեղերի և բաղկի վրա ևս միծ ուշք են դարձնելու, որոնք այժմեանից սկսած կարգին շինում և մաքրում են օրըստօրէ: Քաղաքից դուրս հասարակաց տեղեր են լինելու որոշած, ուր պէտք է ամեն տղա և աղապանութիւն հաւաքեն, վերան նախ անեն և կրակ տան: Մաքրապահները առհասարակ ընդարձակ միջոցներով և իրաւունքներով զինված են, և եթէ իրանց պաշտօնը բարեխղճութեամբ և շարունակ եռանդով վարելու լինին, կարող են մեծ բարիք անել հասարակութեանը:— Այս բոլորը լաւ է, բայց փողոցների խնդիրը դարձաւ աչքաթող է արած. անցեալ տարի մինչև 8 հազար բուբոն վատնեցին, հող, աւազ և փափուկ քար կրելով փողոցներն անցցին և իւր թէ շինեցին. անձրևներ եկան և այս ձմեռս բոլոր տարիներից աւելի անտանելի էր, —սայլեր, կառքեր և ջրեր կիր էջեր ամենաւառ փողոցներում ցելի մէջ էին ընկնում և երկար ժամանակ չարարում տէրերին. ոտով մանեկոյնների մասին դեռ չեմ խօսում, որ միանգամայն լաց էին լինում: Այժմ այն բոլոր ցեղեր դարձել է անսպառելի փոշի, որը մի թեթիւ քամից անդամ շարժվում է, օդը բարձրանում և մեզ անդադար տանջում, որովհետեւ քամին գրեթէ միշտ կայ: Գլխաւոր և բազմամարդ փողոցներում անհնարին է լինում մանդալ, բարձրացած փողին շատ մանր լինելով սղի մէջ երկար ժամանակ մնում է և շատ ուշ ցած նստում. անց ու դարձ անողներին նայելիս կարծում եմ թէ ջաղացպաններ են, այնքան փոշոտված են լինում նրանք ոտքից մինչև գլուխ: Փողին բնակարանների և խանութների մէջ ևս խեղդում է մեզ ու հանգիստ չէ թողնում: Բանից երևում է, որ 8 հազար բուբոն ծախսել են մեր կեանքը աւելի թշուառացնելու համար միայն: Քաղաքը հարուստ է և առատ միջոցներ ունի իր ձեռքում:— այս մեծ չարիքի առաջն առնելու, միայն թէ գուժ և արտացաւութիւն պէտք է լինի: Մեր գործողները եթէ մարդկանց աչքերին, ականջներին և թոքերին չեն խնայում, տոկոս և անտրտուն խախտել համարելով նրանց, գոնէ թող հազուադէպ խնայեն, որ շուտով փոշոտվում է, փչանում և ծախելով տակ ձգում ժողովրդին: Բագուն այս րօպէիս երկու ամենամեծ կարիք ունի— փողից ազատվել և խմելու առատ ջուր ունենալ. այս երկուսը կեանքի և մահու խնդիր են և Կուման լաւ կանէր, եթէ այս մասին լրջութեամբ մտածէր և աշխատէր հիմնաւոր և պահանջին համապատասխան կերպով լուծել սրանց:

«Մարդաս, ընկ» խորհուրդը ցանկալով գումարը աւելացնել ի միջի այլոց դիմեց և պ. Կոմարովսկուն և մի ներկայացուած խնդրեց նորանից,

որը սիրով ընդունեց, ասելով որ ինքը քանի տարի շարունակ հայերից շահված գումար ուրախութեամբ է կատարում նրանց խնդիրը: Տեղերի գինը թանկացրած էր և առմասկները խորհուրդի նախագահը և անդամներն էին բաժանում: Ներկայացուած փետրվարի 23-ին եղաւ, ցրվել մեք էր հայ բազմութիւնով, օտարազգիք մի քանի հոգիք էին միայն. լաւ անցաւ, եղանակն էլ վատ չէր. 700 բուբոն չափ արդիւնք գոյացաւ, որից պ. Կոմարովսկին ոչինչ չը վերցրեց իր համար, այլ բոլորը ընկերութեանը նուիրեց: 25 կարելի չը գտվել պ. Կոմարովսկու վարմունքը և շտրնակալ չը լինել նրանից:— Ցիրկումը ահագին բարձրութեան վրա փոքրիկ մանուկները մարմնամարդկան վտանգաւոր շարժումներ էին անում, ձիւրի և բեմի վրա կանայք զանազան դերքեր էին բռնում և զուարճացնում ու ծափահարել տալիս զօսասէր ամբերին: Այնտեղ երկու սեռի մանուկները (օր. դպրոցի աշակերտուհիքը խմբովին գնացել էին) մեծամասնութիւն էին կազմում: Տոմարները ծախելու համար խորհրդի անդամներն էին աշխատել. փողը, որ մի մեծ գումար չէ, հայերի գրպանիցն էր դուրս եկել. ցրվել տիրոջ պէտք է շտրնակալութիւն անէին և երախտապարտ մնային. իսկ ընկերութեան նպատակն է բարոյական լոյս ծաւալել մարդասիրաբար, թէ մեք բարոյական անուշութիւնն ասածը ինչպէս են հասկանում, չը գիտեմ. բայց ես վերոյիշեալ հանգամանքները մի տեղ բերելով ինքս ինչ հարցում եմ, թէ արդեօք «Մարդաս. ընկերութեանը» յարմար է այս տեսակ փող հաւաքել և թէ նա կարող չէր այս գումարից աւելին անգամ այլ ձանապարհով դուրս բերել ժողովրդից:

Կասպիացի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԸ

Բ. Դռնէն քաղաքի կուսակալին եկած հրամանը՝ Կիլիկիոյ Ս. կաթողիկոսին ալ ազդարարուած էր, տակաւին անգործադրել մնացած է. վասն զի թէ քաղաքի մէջ բանտարկուած 25 թիւնցիք և թէ Մառաշու մէջ բանտարկեալներն իրենց դառն վիճակին մէջ կը հիծեն, և տեղական կառավարութիւնը կաշխատի որ զանոնք 15 տարի բանտարկութեան դատապարտելու վճռադրք բերել տայ Բ. Դռնէն:

Ազնիւ խմբագիր, ուր տեղ որ արդարութիւնը կառավարութեան մը հպատակներուն նկատմամբ հաւասարապէս չը գործադրուի, այսինքն կրօնի և ցեղերու մասին մեծամեծ խտրութիւններ կը դրուին և օրէնքներ ըստ այնմ կը գործարարուի, այսպիսի անտանելի և ապօրինաւոր հետեւութեանց տեղի կուտայ:

25 թիւնցիք 15 տարի է ի վեր իրենց տըրոց ծանրութեան համար կառավարութեան ուշադրութիւնն և արդար տնօրէնութիւնը կը հայցեն, բայց իբրեւ ապտամբ և անհրեղանգ կը նկատուին, իսկ քրդերն և ուրիշ զանազան ցեղեր, որոնք աշխատաւոր և օգտակար հպատակներ կը հարստահարեն ու կը կեղեքեն, ոչ միայն անպատիժ կը մնան, այլ և իրենց ապօրինաւոր և վնասակար ընթացից մէջ կը քաջաբերուին: Ահաւասիկ այսպիսի իրողութեան մը կենդանի օրինակներն, որոց քաղաքի մէջ անձամբ ակնատես կը լինեմք: Զիջէյի քրդերն և անոնց պարագլուխները (Պէտրիանի որդիքը), որոնք անուր չարիքներ հասուցած էին տեղոյն բընակացի, այս օրերս իրենց ընկերներով, քաղաքս բերդով իբրեւ օգտակար մարդիկ մեծ պատուով ի տես ժողովրդեան շուկաներ կը պտտին, և տեղական կառավարութիւնը պատուաւոր կերպով նոցա բոլոր պէտքերը կը հոգայ, մինչդեռ 25 թիւնցի բանտարկեալներն ստորերկրեայ արտոններու մէջ անթի ծարաւ մեռնելու աստիճան կը հե-

ծեն, ինչպէս արդէն անոնցմէ ութը չը կըրնալով դիմանալ՝ կը մեռնին, և մնացեալներուն վրա արգահատող չը լինիր, այլ կուգուի որ նոքա յաւիտեան իրենց սոյն վիճակին մէջ դատապարտեալ մնան:

25 թիւնցի մեռելներուն թիւն այժմ իննի հասած է. քաղաքի մէջ մեռնողն Աւետիս Երկան—Մանուկեանն է. իսկ Մառաշի մէջ մեռնողներուն անուններն են հետեւեալները. Նազարէթ Աֆիօճեան, Յակոբ Քերէտեան, Աւագ Մերունեան, Փանոս Եօլլէկեան, Սարգիս Ղայեաեան, վերջերս մեռնող երկու անձանց անունները տակաւին գիտցուած չէ. ուրիշ մը ալ քաղաքս զինուորներով բերուած ժամանակ անհետ եղած է Ելըաֆի դիւղի մօտ:

Այս ամենն կը հետեւի որ տեղական իշխանութիւնը օգտակար և աշխատասէր հըպատակները վնասակար, և վնասակարներն օգտակար դատելով՝ վնասակարներն իրենց ընթացից մէջ կը քաջաբերեն՝ ապագային զանոնք իրենց ունայն նպատակին ծառայեցնելու համար, մինչդեռ անցեալ և ներկայ իրողութիւնը սորա հակառակը կապացուցանէ:

Կիլիկիոյ Ս. կաթողիկոսին աշխատութեամբ քաղաքի 25 թիւնցի բանտարկելոց համար, որոնք 42 հոգի են, Ս. Մանուկէն ի վեր 3000 զրուշի չափ գումար մը ազգայններէն հաւաքուելով առհասարակ ամենուն համար մէկ մէկ ձեռք զգեստ շինուցաւ, և բաւական ալ ստակ աւելնալով՝ իրենց տրուցաւ. ի բաց առեալ մասնաւոր բարեւէր անձանց մատուցած նպաստներն, որով քաղաքի մէջ բանտարկեալներն իրենց անհրաժեշտ պիտոյից մասին բաւական գոհացուցիչ վիճակին մէջ կը գտնուին:

25 թիւնցիք իրենց անհրաժեշտ պիտոյից համար չեն կրնար մօտակայ բնակացի հետ յարաբերութիւն ունենալ. դուրս ելողներն իրենց կենդանիները, ունեցածները և շատ անգամ իրենց անձը վտանգի կենթարկեն. չըջալայ ծածկներն ու չըբէնները զանոնք ուր տեղ որ տեսնեն կը կողոպտեն ու կը դարնեն, տեղական կառավարութիւնն ալ անտարբեր կը կենայ:

Քաղաքի գիւղերէն Ղնեայ և Նագուպի (ոչ թէ Հայ կաթօլիկ այլ Լատինացած) Հայոց թիւը 300 անձանց կը հասնի, որոցմէ 205-ը Ղնեայ և 95-ը Նագուպիէ են. ասոնց Լատինականութեան փոսին մէջ առաջնորդող տէր Մեարոպ քահանայ նաղբանն է, որ այժմ քաղաքի մէջ կը գտնուի Յիսուսեանի մը կերպարանքով:

Այս բազմաթիւ Հայոց լատինանալուն պատճառը զլուսւորապէս քաղաքի տեղապահ Մովսէս վարդապետն *) եղած է, որովհետեւ յիշեալ վարդապետն անոնց ճէխ ձան. նառնուն անձին կողմանէ գիւղացւոց հասուցած չարեաց մասին եղած քանիցս ազգաբարութեանց և բողոքոց կարեւորութիւն տուած չէ բերելով թէ՛ իւր առաջնորդ չեմ, ատի առաջնորդի դրած է, ինչ որ կուգէք եղէք, կուգէք տաճիկ եղէք, կուգէք լատին: Ասոր վրա յիշեալ գիւղացիք յուսահատած քաղաքի Գաղղոյ և Խալկոյ հիւպատոսներուն կը դիմեն, որպէս զի զերեւը պաշտպանեն և անոնց առջև Լատինեալ յանձն կառնուն: Հիւպատոսներն այս խնդրոյն համար Մովսէս վարդապետին աղաքարութիւն կրնեն. կրնեն «այս մարդիկը կուգեն Լատինեալ և մենք կուգենք որ մեր և Հայոց մէջ այսպիսի խնդիր մը տեղի չունենայ»: Բայց Մովսէս վարդապետ առաջնորդանալու բաղձնաբով իր անտարբերութեան մէջ անդրդուելի կը մնայ, յորմէ կը հետեւի այս կըրօնափոխութիւնը:

Մովսէս վարդապետ քաղաքի ժողովուրդն

*) Ցաւալի է որ վարդապետը չը կրցաւ դեռ այդ անախտան և ազգայնեայ վարդապետը հեռացնել Հալէպէն: Ծ: Խ:

այսչափ ժամանակէ ի վեր երկպառակելուն ու խռովելուն չը բաւականանալով՝ զանոնք բաժնելու կամ կամ կաթօլիկութեան ծոցը դրելու կաշխատի տակաւին, վասն զի ցարդ իր անհամբերութեամբ սպասած առաջնորդութիւնը ձեռք չը կրցաւ բերել, և յուսահատութենէն քանի մը ուսմիկ մարդիկ իրենք մնացը գործիք ընելով՝ Ս. կաթողիկոսին նըկատմամբ ալ անպատիւ ցոյցեր կրնէ. եկեղեցի չըջնար, ժողովուրդն իր կողմ գործիքներուն միջոցաւ կը յորդորէ որ մի և նոյն բակին մէջ գտնուած եկեղեցին առնեն, միւսս ներքին բաժնուելու համար: Սորա յամառ ընթացքն ընթերցողը գիւրաւ կրնայ հետեցնել որ այս շահասէր անձին տակաւին քաղաքի մէջ մնալէն ի՞նչ ծանր անտեղութիւններ ու դժուարութիւններ կրնան յառաջ գալ, որոյ մասին խոնարհաբար հայրախնամ վարչութեան ուշադրութիւնը կը հրաւիրեմք ի բարւոք տնօրինութիւն. զի Մովսէս վարդապետ առանց քննութեան կը պահանջէ Ս. կաթողիկոսին որ իր ձախորդ և միակողմանի երազած առաջնորդական ընտրութիւնը վաւերացնէ և ըստ այնմ վարչութեան տեղեկագրէ. իսկ Ն. Սրբապետութիւնն իրողութիւններն ազգային պատրիարքարան հաղորդած է և ցարդ նորա որոշմանը կը սպասէ որպէս զի ըստ այնմ վարուի,

Առ այժմ այս չափը բաւական համարելով կը խոստանամ որ այսուհետ վիճակիս մէջ տեղի ունեցած դէպքերը 25-ը մեծապատուութեան հաղորդեմք:

ՄԵՍԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՎԻԵՆՆԱ, 7/19 մարտի: Սալոնիկից հաղորդում են, որ Մակեդոնիայում յունաց և բոլգարացոց շարժումները հետզհետեւ դուրսնում են: Ամեն կողմից երևան են գալիս ապստամբների խմբերը: Սալոնիկից աշխատում է այդ բանի առաջն առնել. Կ. Պոլս առաջարկութիւն է ուղարկած, զինելու թիւրք ազգաբնակչութիւնը արագաձիգ հրացաններով, և ձայն տալու նրանց բոլոր բըրիտաններին ջնջելու:

ՕՐԵՈՒ, 8/20 մարտի: Օրյովո-Վիտեբսկեան երկաթուղու վարչութիւնը յայտնել է, որ իր գործից վնաս կրելու պատճառով, Վիտեբսկում դադարեցրած են բոլոր այն տրանզիտի վազմները, որոնք պէտք է գնալին Մոսկվա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի: «НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը յայտնում է, թէ այն լուրը, որ իբր Կիլիկում կառնաւորվածների թուում կայ և մի բարձր դասակարգի տիկին, բողոքովին անհիմն է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի: Լօրիս.Մէլեքով կոստը մարտի 8-ին հեռագրում է Աստրախանից, թէ այդ օրը երկու մասնաժողովներ ուղարկվեցան քննելու Վօլգայի և Ախտուբայի վրա գտնված բոլոր ձկների ամբարները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի: Պետական բանկի 50/ տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ռ. 55 կ., երկրորդ 96 ռ. 37 կ., երրորդ 95 ռ. 55 կ., չորրորդ 95 ռ. 75 կ., ներքին 50/0 առաջին փոխառութեան տոմսակը արժէ 238 ռ. 50 կ., երկրորդ 234 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 93 ռ. 87 կ., երկրորդ 93 ռ. 52 կ., ոսկի 8 ռ. 45 կ.: Տրամագրութիւնը խաղաղ է:

Խմբագիր — Հրատար. ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

